ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հուլիսի 2015 թվականի N 730 - Ն

ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2014 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրի N 2 առդիրի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 765 որոշմամբ հաստատված կանոնակարգի 10-րդ կետի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ստեղծել առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողով:

2. Հաստատել՝

1) առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի ավարտից հետո 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել նշված ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հուլիսի 6
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 2-ի N 730 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հասարակական հիմունքներով աշխատող մարմին է: Հանձնաժողովն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 730 -Ն որոշման համաձայն:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված և 2014 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացված «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրով և սույն կանոնադրությամբ:

3. Հանձնաժողովի լրիվ անվանումն է՝ առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացման ղեկավար հանձնաժողով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

4. Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրա-

մադրված «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման կառավարումն է:

5. Հանձնաժողովը հանդես չի գալիս որպես ծրագիրն իրականացնող կազմակերպության կառավարման մարմին:

6. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) ծրագրի իրականացման ընթացքում 100,0 հազ. ԱՄՆ-ի դոլար գումարից ավելի փոփոխությունների կատարման անհրաժեշտության առաջացման դեպքում առաջարկվող փոփոխությունները համապատասխան հիմնավորումներով հաստատելը, որոնք Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից պետք է ներկայացվեն Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նախապես համաձայնեցնելով վարկ տրամադրող կազմակերպության հետ.

2) ծրագրի իրականացման կառավարման գրասենյակի (այսուհետ՝ ԾԻԿԳ), ինչպես նաև ծրագրի շրջանակում «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակի (այսուհետ՝ ԾԻԳ) գործունեության նկատմամբ վերահսկողությունը.

3) ծրագրի նախապատրաստական փուլում կանխավճարի կամ վարկի առկայության դեպքում այդ միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողությունը.

4) վարկային կամ դրամաշնորհային համաձայնագիրն ստորագրվելուց և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելուց հետո ԾԻԿԳ-ի մշակած ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների տարեկան ժամանակացույցի և ծրագրի բյուջեի քննարկումն ու հաստատումը, եթե ծրագրի իրականացման պլանով դրա իրավասությունը վերապահված չէ երրորդ անձի.

5) ծրագրով նախատեսված և հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրի շրջանակներում աշխատանքների իրականացման ժամանակացույցի ու ծրագրի բյուջեին

համապատասխան՝ հանձնաժողովի սահմանած կարգով և ձևով հաշվետվությունների հաստատումը.

6) ծրագրի՝ հաստատված տարեկան աշխատանքների ժամանակացույցի և բյուջեի հիման վրա ապրանքների, սարքավորումների, խորհրդատվական ծառայությունների, նախագծային, շինարարական ու վերահսկման աշխատանքների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցույթների արդյունքների հաստատումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 765 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված ծրագրեր իրականացնող պետական հիմնարկի օրինակելի կանոնադրության 14-րդ կետի «դ» ենթակետում նշվածի.

7) ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցների օգտագործման, ինչպես նաև միջոցների վերաբաշխման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ ներկայացնելը՝ համաձայնեցնելով վարկ տրամադրող կազմակերպության հետ.

8) ԾԻԿԳ-ի կողմից ներկայացվող հաշվետվություններում հայտնաբերված խախտումների ու թերությունների վերացման համար համապատասխան միջոցների ձեռնարկման մասին որոշումներ ընդունելը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը.

9) ծրագրի՝ հաստատված տարեկան աշխատանքային ժամանակացույցից և բյուջեից առկա շեղումների վերացման մասին որոշումներ ընդունելը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը.

10) վարկ տրամադրող միջազգային կազմակերպության ծրագրի իրականացման ղեկավարների տարեկան այցերի, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև ծրագրի առանձին բաղադրիչների համար պատասխանատու մասնագետների այցերի ժամանակ արտահերթ նիստ հրավիրելը և պատվիրակության հետ ծրագրի իրականացման արդյունքները

քննարկելը, արդյունքների մասին 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն զեկուցագիր ներկայացնելը.

11) ծրագրի ավարտից հետո ծրագրի իրականացման արդյունքներն ամփոփելը և ծրագրի արդյունքների մասին 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն զեկուցագիր ներկայացնելը:

7. Ծրագրի շրջանակներում առաջացող հարցերը, ԾԻԿԳ-ի ղեկավարի ներկայացմամբ, քննարկվում են հանձնաժողովի նիստերում՝ դրանք ներկայացվելու օրվանից հետո մեկշաբաթյա ժամկետում:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և շրջաբերական գրությունների միջոցով: Նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ՝ ծրագրի իրականացման ընթացքի ու հաստատված աշխատանքային ժամանակացույցի կատարման մասին ԾԻԿԳ-ի ղեկավարի զեկույցը լսելու և քննարկելու նպատակով, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են:

9. Հանձնաժողովն իր արտահերթ նիստերը գումարում է ծրագրի իրականացման ընթացքում առաջացած հարցերի և խնդիրների լուծման համար՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ, հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի կամ ԾԻԿԳ-ի ղեկավարի առաջարկությամբ:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

11. Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից

մեկը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

12. Հանձնաժողովի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերի հետ միասին տրամադրվում է հանձնաժողովի անդամներին՝ գումարվող նիստից 5 օր առաջ:

13. Հարցի քննարկման ընթացքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն պահանջվելու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է հանձնաժողովի հաջորդ նիստ: ԾԻԿԳ-ի ղեկավարը պարտավոր է ապահովել պահանջվող նյութերի տրամադրումը:

14. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում հանձնաժողովի նախագահի մոտ, եթե հանձնաժողովի նախագահը նիստի անցկացման տեղի վերաբերյալ այլ որոշում չի ընդունում:

15. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

16. Հանձնաժողովի որոշումներն ստորագրում են հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը:

17. Հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձինք:

18. Հանձնաժողովի հաստատմանն են ներկայացվում ԾԻԳ-ի կողմից կազմված՝ 50 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամից ավելի արժողությամբ մրցույթի հայտահրավերը, ներկայացված մրցութային առաջարկների մասին ամփոփ տեղեկանքը, անվավեր ճանաչված առաջարկների հիմնավորումները, մրցութային հանձնաժողովի՝ հաղթող ճանաչելու մասին որոշումը, նախատեսվող գնի հիմնավորումը (շինարարության նախահաշիվը, ապրանքների՝ տվյալ օրվա մոտավոր միջին գները և այլն), նախատեսվող գնից բարձր գնառաջարկի հիմնավորումը:

19. Առանձնահատուկ դեպքերում (ելնելով աշխատանքների կարևորությունից՝ հանձնաժողովի որոշմամբ) մրցութային առաջարկների փաթեթները կարող են բացվել

հատուկ հրավիրված հանձնաժողովի նիստում՝ պահպանելով մրցույթի անցկացման համար սահմանված բոլոր կանոնները:

20. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար կարող են հրավիրվել օրակարգի հարցերին առնչվող համապատասխան կազմակերպության ներկայացուցիչները:

21. 350 մլն դրամ և ավելի գումարով մրցույթների արդյունքները հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարություն, եթե վարկային պայմանագրով այլ պահանջներ կամ սահմանափակումներ նախատեսված չեն:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

22. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարն է:

23. Հանձնաժողովի նախագահը՝

1) պատասխանատու է հանձնաժողովի աշխատանքների արդյունավետ իրականացումը կազմակերպելու համար.

2) ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կառավարությունում և այլ կազմակերպություններում.

3) իրականացնում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

24. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխան ճյուղային նախարարության կամ գերատեսչության պատասխանատու պաշտոնյաները, ծրագրին առնչվող

կազմակերպությունների ղեկավարները՝ առնվազն 3 մարդ, ԾԻԳ-ի տնօրենը, մեկական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունից:

25. Հանձնաժողովի այն անդամը, ով համաձայն չէ հանձնաժողովի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ:

26. Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում է համապատասխան նախարարը կամ գերատեսչության ղեկավարը:

27. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

28. Հանձնաժողովի անդամի անդամությունը դադարում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

29. Հանձնաժողովի քարտուղարին նշանակում է հանձնաժողովի նախագահը՝ հանձնաժողովի կազմից:

30. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է հանձնաժողովի նիստի քննարկումները և դրանց հիման վրա կազմում որոշումների նախագծերը.

2) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում դրանց տրամադրումը հանձնաժողովի անդամներին.

3) հետևում է հանձնաժողովի որոշումների կատարմանը և հանձնաժողովի նիստում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին.

4) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է հանձնաժողովի որոշումների համարակալումը և որոշումների պատճենները տրամադրում հանձնաժողովի անդամներին.

7) հանձնաժողովի որոշումները և նիստերի արձանագրություններն ուղարկում է համապատասխան նախարարություններ ու գերատեսչություններ:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

31. Հանձնաժողովի կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

32. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 2-ի N 730 - Ն որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կ. Ճշմարիտյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարար (հանձնաժողովի նախագահ)
Ս. Ավետիսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ռ. Մակարյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Է. Տարասյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ե. Հովհաննիսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Է. Ավետյան	- ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի գործադիր տնօրեն
Բ. Ենգիբարյան	- «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Խաչատուրյան	- Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Վ. Սահակյան	- «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
Ռ. Բաղդասարյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վարչության պետ
Ա. Եգանյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արդյունաբերության զարգացման վարչության պետ
Լ. Մաքսուդյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ստան-դարտացման, չափագիտության և տեխնիկական կանոնակարգման վարչության պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

730k.voroshum